Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թվականի
հոկտեմբերի 18-ի N 1317 - Ն որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ՈՐԱԿԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ

Տ. Դավթյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարար (խորհրդի նախագահ)
Հ. Դարբինյան	- ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ
Ա. Ավետիսյան	- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Ա. Գալստյան	- ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ
Ա. Կարապետյան	- ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Ռ. Մակարյան	- ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Հ. Մխիթարյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ
Ա. Պետրոսյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ա. Բախչագուլյան	- ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ
Ա. Ավալյան	- ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Մ. Սարգսյան	- ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի նախագահ (համաձայնությամբ)
Ա. Ղազարյան	- Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ (համաձայնությամբ)
Լ. Խալիկյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի շուկայի վերահսկողության պետական տեսչության պետ

Ա. Վանյան	- ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկև հակահամաճարակային հսկողության տեսչության պետ
Ա. Մկրտչյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պետական հրդեհայինև տեխ-նիկական անվտանգության տեսչության պետ
Ե. Ազարյան	- «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)
Վ. Սահակյան	- «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)
Գ. Գալստյան	- «Հայաստանի շինարարների միություն» ԻԱՄ-ի նախագահ (համաձայնությամբ)
Ն. Դարբինյան	- «Էկո-Գլոբ» հասարակական կազմակերպության նախագահ (համաձայնությամբ)
Լ. Յաղուբյան	- «Սպառողների իրավունքների պաշտպանություն» հասարակական կազմակերպության ղեկավար (համաձայնությամբ)
Լ. Մաքսուդյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի դրակի ենթակառուցվածքի վարչության պետի տեղակալ (խորհրդի քարտուղար)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
հոկտեմբերի 18-ի N 1317 - Ն որոշման

ՈՐԱԿԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Որակի և տեխնիկական կանոնակարգման ազգային խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված կոլեգիալ խորհրդատվական խորհրդակցական մարմին է, որում նկարագրված են հանրային և գործարար միջավայրը ներկայացնող հիմնական ազգային շահագրգիռ կողմերը:

2. Խորհուրդն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ կանոնադրությամբ՝ իր գործունեությունն իրականացնելով միջազգային իրավունքի ընդունված սկզբունքների և նորմերի հիման վրա:

3. Խորհրդի անվանումն է՝

1) հայերեն՝ «Որակիևտեխնիկական կանոնակարգման ազգային խորհուրդ».

2) անգլերեն՝ «NATIONAL COUNCIL OF QUALITY AND TECHNICAL REGULATION»:

II. ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Խորհրդի հիմնական գործառույթներն են՝

1) որակի ենթակառուցվածքի հարցերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրումը Հայաստանի Հանրապետության կառավարությանը.

2) դասկի ենթակառուցվածքի արդյունավետ գործունեությունն ապահովող միջոցառումները Հայաստանի Հանրապետության կառավարությունն ներկայացնելը.

3) երկրում դասկի ենթակառուցվածքի քաղաքականության լիարժեք դրսևորման և Հայաստանի միջազգային ինտեգրման խրախուսման, պետության և շահագրգիռ կողմերի միջև երկխոսության, ինչպես նաև հետադարձ կապի ապահովման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

4) դասկի ենթակառուցվածքի արդիականացման գործընթացի և դրա բարեփոխման իրականացման միաժամանակյա ընթացքի ապահովման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

5) դասկի ենթակառուցվածքի բարեփոխման գործողությունների ծրագրի և հաշվետվությունների քննարկումը և գնահատման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

6) անհրաժեշտ գործողությունների և (կամ) միջոցառումների ծրագրի ու իրականացման ժամանակացույցերի մշակումը և դրանք Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելը.

7) տեխնիկական կանոնակարգերի մշակման ամենամյա ծրագրի նախագծի վերաբերյալ համապատասխան առաջարկություններ Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը.

8) տեխնիկական կանոնակարգերի մշակման, ընդունման կամ մերժման վերաբերյալ առաջարկություններ Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելը.

9) սպառողների սոցիալ-տնտեսական պահանջների ու կարիքների հիման վրա տեխնիկական կանոնակարգերի մշակման գերակայությունների սահմանման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկություններ ներկայացնելը:

5. Խորհուրդը կարող է համագործակցել դասկի ենթակառուցվածքի ոլորտում գործունեություն ծավալող միջազգային կազմակերպությունների հետ:

III. ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Խորհուրդն իր գործունեության ընթացքում սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներին հասնելու համար իրավունք ունի՝

1) կազմակերպելու և անցկացնելու քննարկումներ.

2) ստեղծելու աշխատանքային խմբեր, հաստատելու դրանց աշխատակարգերը, կազմը և ընդունելու դրանց գործունեությունն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ այլ որոշումներ:

IV. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7. Խորհրդի կազմում ընդգրկված են խորհրդի նախագահը, խորհրդի անդամները և խորհրդի քարտուղարը:

8. Խորհրդի նախագահը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարն է:

9. Խորհուրդը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության, համակարգող և կանոնակարգող մարմինների, ստանդարտացման, չափումների միասնականության ապահովման և հավատարմագրման ազգային մարմինների, ինչպես նաև արտադրողների, գործարարների, սպառողների շահերը ներկայացնող կազմակերպությունների ներկայացուցիչներից:

10. Խորհրդի նախագահը՝

1) ղեկավարում է խորհրդի նիստերը.

2) հաստատում է խորհրդի նիստերի օրակարգերի նախագծերը և արձանագրությունները.

3) նշանակում է խորհրդի աշխատանքային խմբերի կազմը և ղեկավարներին.

4) խորհրդի անդամների միջև կատարում է աշխատանքի բաշխում:

11. Խորհրդի նախագահի՝ խորհրդի նիստին մասնակցության անհնարինության դեպքում խորհրդի նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին:

12. Խորհրդի անդամները՝

1) ներկայացնում են առաջարկություններ խորհրդի նիստի վարման օրակարգի վերաբերյալ.

2) մասնակցում են խորհրդի նիստերին և դրանց ընթացքում ներկայացվող հայտերի ու դրոշումների քննարկմանը.

3) մասնակցում են քննարկվող հայտերի քվեարկությանը.

4) մասնակցում են խորհրդի կողմից ստեղծված աշխատանքային խմբերի աշխատանքներին, ինչպես նաև գլխավորում են աշխատանքային խմբերը.

5) ներկայացնում են առաջարկություններ խորհրդի նիստի գումարման վերաբերյալ:

13. Խորհրդի քարտուղարը՝

1) կազմակերպում է խորհրդի նիստերի անցկացումը և այդ նպատակով խորհրդի անդամներին էլեկտրոնային փոստով տրամադրում է օրակարգը, քննարկվելիք խնդրահարցերը (նյութերը) և ծանուցում նիստի անցկացման վայրի, ամսաթվի ու ժամի մասին՝ նիստի անցկացման օրվանից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ.

2) վարում է խորհրդի աշխատանքների հետ կապված գրագրությունը.

3) արձանագրում է նիստերը.

4) նիստերի ստորագրված արձանագրությունների օրինակները տրամադրում է խորհրդի բոլոր անդամներին.

5) ապահովում է խորհրդի դրոշումների նախագծերի պատրաստումը.

6) առկայության դեպքում՝ գրանցում է խորհրդի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները:

V. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

14. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով: Հերթական նիստերը հրավիրվում են յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ, իսկ արտահերթ նիստերը՝ ըստ անհրաժեշտության:

15. Խորհրդի նիստը կայանում է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին:

16. Խորհուրդը հաստատում է օրակարգը՝ նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

17. Խորհուրդը քննարկում և (կամ) ուսումնասիրում է նիստի օրակարգը՝ նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

18. Խորհրդի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

19. Խորհրդի այն անդամը, ով համաձայն չէ խորհրդի ընդունած որոշմանը, ներկայացնում է իր գրավոր հատուկ կարծիքը, որը կցվում է արձանագրությանը:

20. Խորհրդի նիստին որևէ անդամի մասնակցության անհնարինության դեպքում նրան կարող է փոխարինել տվյալ անդամի կողմից լիազորված այլ անձ:

21. Խորհրդի նիստերին կարող են մասնակցել տեղական կամ միջազգային փորձագետներ կամ մասնագետներ, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ:

22. Խորհուրդն իր կողմից իրականացված գործունեության մասին տեղեկատվությունը հրապարակում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության էլեկտրոնային կայքում:

23. Խորհրդի կողմից ստեղծված աշխատանքային խմբերն իրենց գործունեությունն իրականացնում են խորհրդի նախագահի (նախագահողի) կողմից յուրաքանչյուր խմբի համար հաստատված աշխատանքային ծրագրի համաձայն:

24. Խորհրդի աշխատանքները կազմակերպում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի որևէ ենթակառուցվածքների վարչության պետի տեղակալը, որը խորհրդի քարտուղարն է:

25. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունում նշվում են՝

1) արձանագրության վերնագիրը և նիստի հերթական համարը.

2) նիստի անցկացման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և վայրը.

3) նիստին ներկա գտնվող անդամների անունները.

4) փակ քվեի հայտը.

5) փակ քվեի հայտի շրջանակներում կատարված առաջարկությունները և առարկությունները.

6) խորհրդի որոշումները:

26. Արձանագրությունն ստորագրում են խորհրդի նախագահն ու քարտուղարը, և այն էլեկտրոնային փոստով տրամադրվում է խորհրդի բոլոր անդամներին:

VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

27. Խորհրդի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

28. Խորհրդի գործունեության դադարումից հետո խորհրդի գործունեությանն առնչվող փաստաթղթերը և այլ նյութերն ենթակա են պահպանման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ